

ԱՎԻՆՅՈՆԻ ՊԱՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԺԱՆ ՌԻՇԱՐ (Ֆրանսիա)

Հայաստանն սկսում է առանձնահատուկ տեղ գրավել Արեւմուտքի քրիստոնյաների դիտակցութեան մեջ, երբ, Կղեմես V-ի օրոք, սկսվում է պապութեան պատմութեան ավինյոնյան շրջանը: Կիլիկիայի հայկական թագավորութիւնը, որ հյուրընկալել էր հայրապետական աթոռը վերջինիս՝ մամուլեքների կողմից Հռոմկլայից հալածվելուց հետո, սկսում է դիտվել որպես, այսպես կոչված, Լատինական Արեւելքի բաղկացուցիչ մասը՝ անվանվելով պարզապես Անդրծով (Outremer): Թագից հրաժարված Հեթումը թագավորը, որը, սակայն, շարունակում էր մասնակցել իր եղբորորդու թագավորելուն, շատ կապված էր Ֆրանցիսկյան վանականների հետ և հանդիսացել էր XIII դարավերջի Խաչակրաց արշավանքների ծրագրերի և մոնղոլների հետ դաշինքի նախաձեռնողներից մեկը: Հեթումյան դինաստիան, ընդհանուր առմամբ, շատ սերտորեն՝ խնամիական կապերով, կապված էր Կիպրոսի Լուսինյանների հետ: Կիպրոսը և Հայաստանը շարունակում էին մնալ Արեւմուտքի քրիստոնեութեան երկու հենարաններն Արեւելքում: Եվ Այստով էր, որ անցնում էին դեսպանները, միսիոներները, վաճառականները, որոնք հասնում էին մինչև մոնղոլական Ասիա:

Այս կապերի խորհրդանիշը հայոց արքայազն Հեթումի (Hayton)՝ Կոռիկոսի տիրակալի անձը և դործունեութիւնն է, որն ուղարկվեց պապի մոտ և դարձավ իր զարմիկ Ամորի դը Լուսինյանի՝ Տյուրոսի տիրակալի տեսակետն արտահայտողը, երբ վերջինս իշխանութեան դուրս անցավ Կիպրոսում: Ամորին ամուսնացել էր Հեթումյան արքայադուստր Զապելի հետ և վայելում էր Օչին թագավորի աջակցութիւնը, որը մինչև իսկ իր ամրոցներում բանտարկեց Կիպրոսի Հենրի II թագավորին և նրա կողմնակիցներին, որոնց կղզուց արտաքսել էր Տյուրոսի տիրակալը: Կղեմես V-ը ձեռնպահ մնաց Հեթումի փաստարկներին հետևելուց, սակայն նրանից մի ուսումնասիրութիւն խնդրեց՝ Խաչակրաց արշավանքներին նախապատրաստվելու համար: Այդ ուսումնասիրութիւնը «Flor des estoires de la terre d'Orient»-ն էր («Մաղիկ պատմութեանց արեւելյան աշխարհին»), որում հայոց արքայազնը, համոզված, որ ռազմարշավի հաջողութիւնը կախված էր լինելու մոնղոլների աջակցութիւնից, փորձում էր ապացուցել, որ վերջիններս չհասնելու կապված էին քրիստոնյաների շահերի հետ, որ նրանք կօգնեին պայքարելու մամուլեքների դեմ, և նաև որ Հայկական թագավորութիւնը կարևորագույն դեր էր խաղալու՝ հնարավորութիւն տալով միավորելու թե՛ առաջինների, թե՛ վերջինների ուժերը: Դժբախտաբար, նույն այդ ժամանակ, մի մոնղոլ ղեկավար մահման մատնեց Լեոն թագավորին և նրա հայր Հեթումին՝ այդպիսով ցույց տալով, որ Պարսկաստանի մոնղոլ խանի իսլամ ընդունելն ազդարարում էր մի համազորակ-

ցության վախճանը, որի մեջ Հայերը մեծ աեղ էին դրավել: Հեթումը պիտի հագներ Բելլապատի Պրեմոնտրյան կանոնիկոսների հանդերձը, մինչդեռ Հենրի II-ի վերականգնումը լարվածություն էր մտցրել Կիպրոսի և Հայաստանի փոխհարաբերությունների մեջ (1310 թ.):

Թեև Հայաստանի՝ որպես «Սուրբ վայրերի ետ վերադարձման» ձեռնարկման բաղկացուցիչ մասի, դերը պիտի նվազեր, պապերը, այնուամենայնիվ, շարունակում էին ուշադիր մնալ փեքրիկ թագավորության ճակատագրի հանդեպ: Այսպիսի դրավումը մամուլքների կողմից (1321թ.) պատճառ դարձավ, որպեսզի Հովհաննես XXII պապը օգնություն ուղարկի Հայաստան՝ նավահանգիստը վերադարձնելու հնարավորություն տալու համար: Նույնը կատարվելու էր 1337 թվականին. թեև սուլթանը Հայաստանի թագավորից պահանջել էր պապությանը օգնության չկանչելու երգում տալ, Բենեգիկոս XII պապը նրան ազատեց այդ երգումից և պապության հաշվին Հայաստան ուղարկել տվեց սննդամթերքի սլաշարներ, ինչպես նաև զենք ու նավեր:

Սակայն ընդգիծությունը, որն ի հայտ եկավ, երբ Լեոն V-ը խնդրեց, որպեսզի իրեն ազատեն տված երգումից, վկայում է այն մասին, որ Հայաստանում մի ամբողջ կուսակցություն ցանկանում էր ետ կանգնել Արևմուտքի հետ գաղնակցելուց, քանի որ գրա հետևանքով երկիրն ընկնում էր մամուլքների հարվածների տակ: Անկասկած այս էր, որ պատճառ դարձավ Գի գը Լուսինյանի՝ Ամորիի և Զապելի որդու սպանությանը, որը 1342 թ. գահ էր բարձրացել Կոստանդին II անվամբ, և որը, եղբոր հետ միաժամանակ, սպանվեց իր բարոնների կողմից (1344 թ.): Նրանց հաջորդած թագավորները, որոնք այլևս Հեթում II-ի ուղղակի ժառանգները չէին, ձգտեցին հաշտեցնել երկու կուսակցությունները՝ առանց, սակայն, գրան հասնելու: Բարոնների մի խումբ 1360 թ. Հայաստանի թագը հանձնեց Կիպրոսի թագավոր Պետրոս I-ին՝ նրան վերադարձնելով Կոռիկոսի ծովային (կղզու վրա գտնվող) միջնաբերդը: Սակայն երբ Գիի գարմիկը Լեոն V-ը, որը թագադրվել էր 1374 թ. մի լատին եպիսկոպոսի կողմից, գերի ընկավ մամուլքների մոտ, պապը կարողացավ միայն իր համակրանքը հավաստել ազատ արձակված գերյալի հանդեպ և օժանդակել նրան, առանց, սակայն, ի վիճակի լինելու որևէ բան անել նրա թագավորությունը փրկելու համար: Պետրոս I-ի ինչպե՞րսե՞ր արշավանքների ձախողումը և այն դժվարությունները, որոնք սլայմոնավորված էին Զմյուռնիայի պահպանմամբ, վկայում են սլայմոնյան անգորություն մասին:

Դա չի խանգարել, որ Ավինյոնի փոխհարաբերությունները Սիսի թագավորության հետ չափազանց սերտ լինեն: Քաղաքական նպատակներն այստեղ սերտորեն միահյուսված են եղել եկեղեցական խնդիրներին, որոնք առաջնակարգ տեղ են գրավել այդ հարաբերություններում: Վերջիններս տեղ են գտել 1198–1199 թթ. երկար բանակցություններից հետո Լեոն I-ի՝ պապի հետ կնքած դաշնագրի շրջանակներում: Պապությունը ճանաչում էր հայոց եկեղեցու լրիվ անկախությունը՝ նրա կաթողիկոսին իշխանության պատվանշաններ չնորհելով: Վերջ դնելու համար վիճելի հարցերին, որոնք ծագել էին հայկական իշխանությունը Անտիոքի իշխանների տիրապետության փոխարինելու պատճառով, Կիլիկյան դաշտավայ-

րում պահպանվում էր լատինական արքեպիսկոպոսական երկու աթոռների գոյությունը՝ Տարսոնում և Մամեստիայում, առանց, սակայն, հայերի նկատմամբ արդարադատության իրականացման իրավունքի: Թագավորը պտպին խոստանում էր որպես վիճակ տալ Պապեոոն ամրոցը և լատինական պարոցներ ստեղծել՝ դյուրացնելու համար երկու եկեղեցիների հաղորդակցությունը: Եթե հավատալու լինենք XIII և XIV դդ. գոմինիկյան ճանապարհորդներին, ապա այս վերջին կետերը մնացել էին թղթի վրա, և պապերը չէին ձգտում հարգել տալ դրանք: Պապերը, ընդհանուր առմամբ, հարգել են կաթողիկոսի առանձնաշնորհները. այդուհանդերձ, նկատելի են հայկական եպիսկոպոսական աթոռների հետ կապված որոշ նշանակումներ՝ ինչպես Կիլիկիայում, այնպես էլ Մեծ Հայքում, սակայն պապական սահմանափակումների այդ խաղը, որը հատկանշական է եղել ավինյոնյան ժամանակաշրջանի համար, չափազանց ընդհանուր էր, որպեսզի նման միջամտություններ տեղի չունենային, և դրանք լուրջ հետևանքների չեն հանգեցրել: Որոշ դժգոհություն ցուցաբերելուց հետո պապերը ճանաչել են կաթողիկոսի իրավունքը՝ արտոնություններ շնորհելու ամուսնական հարցերում: Դա չի խանգարել Ավինյոնով անցնող հայերին շնորհադրեր, արտոնություններ և հոգևոր առանձնաշնորհներ պահանջել ինչպես իրենց, այնպես էլ յուրայինների համար:

1198–1199 թթ. համաձայնագիրն ընդգրկում էր եկեղեցիների միություն հայտարարագիրը. հայերը ճանաչում էին Պետրոսի աթոռի դերագահությունը և ընդունում էին, որ դավանում են նույն կրոնը, ինչ և Հռոմի եկեղեցին: XIII դարից սկսած դժվարություններ էին առաջացել կարգապահությանը վերաբերող հարցերում ծագած տարաձայնությունների պատճառով: XIV դ. սկզբին Կղեմես V-ը կաթողիկոսից և թագավորից պահանջում էր, որպեսզի նույնացվի այն ամսաթիվը, երբ երկու եկեղեցիները տոնում էին Քրիստոսի Ծնունդը, և որպեսզի հայերը միանային հաղորդության գինուն ջուրը խառնելու սովորույթին. 1307 թ. Սիսի եկեղեցական ժողովը իր համաձայնությունը տվեց այս պահանջի ընդունմանը: Սակայն պարզ չէ, թե իրո՞ք այդ որոշումները լայնորեն իրագործվել են Կիլիկիայում: Դրանք թղթի վրա էին մնում առավել ևս թագավորության սահմաններից դուրս, և դժվարություններ ծագեցին հատկապես Ղփչաղական խանության հայերի հետ: Հայտնի է, որ նրա մայրաքաղաք Սարայը, մասամբ բնակեցված էր մոնղոլների տեղահանած հայերով: Ահա թե ինչու Հովհաննես XXII պապը 1321 թ. մի քանի Ֆրանցիսկյանների ուղարկեց Մեծ Հայք և Ղփչաղական խանություն՝ նրանց վստահելով հայ ճանաչված հոգևոր առաջնորդների և նույնիսկ որոշ վարդապետների ուղղված նամակներ: Այդպիսով պապությունը ուղղակի կապ էր հաստատում հայերի հետ, որոնք մեծ մասամբ խուսափում էին հայրապետական աթոռի իշխանությունից, թեև Արտագի արքեպիսկոպոսը դիտվում էր որպես նրաներկայացուցիչը (էկզարխը)՝ Մեծ Հայքում:

Ըստ էության լատինական եկեղեցու ներկայությունն ավելի վաղ էր հաստատվել այս տարածքում՝ այն կապերի հետևանքով, որ պապությունը ստեղծել էր մոնղոլ խաների հետ, երբ վերջիններիս նստավայրը Մարաղայում էր: Այստեղ հիմնվել էին գոմինիկյանների կամ Ֆրանցիսկյան-

ների նստավայրեր, և Հովհաննես XXII-ը 1318 թ. սահմանել էր եպիսկոպոսական մի նվիրաստություն, որի գլուխը Սուլթանիեի գոմինիկյան արքեպիսկոպոսն էր: Այդպիսով, հիշյալ միսիոներները ստիպված էին փոխհարաբերությունների մեջ մտնել տարածաշրջանի քրիստոնյաների հետ: Ֆրանցիսկյանները, որոնք արդեն իսկ լավ հիմնավորված էին Սիսի թագավորությունում, հատկապես սերտ հարաբերությունների մեջ էին Ծործորի մեծ վանքի և Ս. Թադեոսի վանքի արքեպիսկոպոսի հետ: Դոմինիկյանները և հատկապես Մարաղայի եպիսկոպոսը՝ Բարդուղիմեոս դը Պոջոն, բարենպաստ ընդունելություն գտան այն հայ վանականների մոտ, որոնք մասնակցում էին Գլաձորում վարդապետ Ծսայի Նչեցու սկիզբ դրած աստվածարանական ուսումնասիրությունների վերսկսմանը: Նրանցից մեկը՝ Հովհաննես Քոնեցին, Բարդուղիմեոսին հրավիրեց իր վանքը և խնդրեց նրան հայերեն թարգմանել սխոլաստիկական աստվածաբանության կարևորագույն աշխատությունները, հատկապես Ս. Թովմա Աքվինացու երկերը, և սխոլաստիկական մեթոդը ոգևորությամբ ընդունվեց նրա վանականների կողմից: Այդ մեթոդը, ընդհակառակը, անվստահություն առաջացրեց հենց իր՝ Եսայի Նչեցու, ինչպես նաև Ստեփանոս Օրբելյանի մոտ, որը դրան հակադրում էր հայկական ավանգույթը: Ֆրանցիսկյաններն ավելի զգուշ էին մնում թովմայական դոկտրինաների հարցում: Սակայն այդ ամենի շնորհիվ Մեծ Հայքում պահպանվում էր ինտելեկտուալ մի մթնոլորտ, որը սնուցվում էր լատիներեն աստվածաբանական երկերի թարգմանության մեծ ջանքով:

Այդ խմորումն իր արձագանքն ունեցավ Արևմուտքում: Բայբարսի կողմից Անտիոքի նվաճման հետևանքով (1268թ.) մի քանի հայ վանականներ, փախչելով Սև Լեռան վանքերից, ապաստանել էին Իտալիայում, ուր հիմնել էին համայնքներ՝ միավորված Ս. Բարսեղի ուխտի՝ Իտալիայի հայ եղբայրների միաբանության մեջ: Հայ հոգևոր առաջնորդներ էին գործում ապահովելով օժոմների ղեկավարումը և բավական առատաձեռնորեն շնորհելով նույնիսկ եպիսկոպոսական ձեռնադրումներ: Մոտավորապես 1335թ. իրազրույթյանը միջամտեց Մեծ Հայքից Կիլիկիայով եկած մի անձնավորություն՝ Ներսես Պալիենցը: Նա եղել էր Ուրմիայի եպիսկոպոսը, եկել էր կաթողիկոսի մոտ, որի հետ գժտվել էր, և աջակցություն էր գտել էրզրումի եպիսկոպոսի՝ Սիմեոն Բեկի (1330-1341) կողմից: Ներսեսը եկավ Իտալիա, ուր ձեռք զարկեց հայկական վանքերի բարեփոխմանը՝ նշավակելով այն սովորույթները, որոնք, նրա աչքին, դեմ էին Հռոմի եկեղեցու կողմից ընդունված կանոններին և կարող էին «մատնել» հերետիկոսական ազդեցություններ: Ինչն էլ, ինչպես երևում է, պատճառ դարձավ, որպեսզի նա ստիպեր վանականներին և կամ հոգևոր առաջնորդներին վերստին ձեռնադրվել և նույնիսկ լատինական անուններ ընդունել իրենց հայկական անունների փոխարեն: Դա ստիպում է մտածել հնարավոր «վերամկրտությունների» մասին՝ մի սովորույթ, որը, ինչպես հայտնի է, դործազրվել է քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հայերի ընդհարումների ժամանակ, և որը վերջնականապես պիտի վերացվեր Գրիգոր XI-ի կողմից, 1371թ.: Այսպես թե այնպես, պապությունն անհանդուստացավ, և Ներսեսը կանչվեց Ավինյոն: Այստեղ նրան գնահատեցին որպես թարգմանիչ և

վստահեցին հայոց լեզվի դասավանդումը: Բենեդիկտոս XII պապը, բացի այդ, նրան հանձնարարեց շարադրել մի ուսումնասիրություն այն սխալների մասին, որոնք նա վերագրում էր հայ եկեղեցուն: Միևնույն ժամանակ Իտալիայի հայ հոգևորականներից ոմանք հրավիրվեցին Ավինյոն, ուր նրանց քննեցին և ուսուցանեցին՝ վանքերում մի նոր միջավայր ապահովելու նպատակով: Հարկ է նշել, որ այդ ժամանակ պապերի քաղաքում մի ամբողջ խումբ հայեր կային և այստեղ մի շարք հայերեն երկեր են թարգմանվել լատիներեն:

Արդեն Մանագլեբրտի արքեպիսկոպոսի տիտղոսը կրող Ներսես Պալիենցը *Libellus*-ը («Պարսավագիր») ավարտեց 1341-ին: Այն վստահեց երկու բանագնացների՝ ասպետ Թորոս Միքայելենցին և Ֆրանցիսկյան վանական Դանիելին, որոնք եկել էին օգնություն խնդրելու Հայկական թագավորության համար: Դա մի ծավալուն ցուցակ էր՝ 117 հոդվածներով, որոնցում թվարկվում էին հայ եկեղեցու վարդապետության և սովորույթների դեմ ուղղված ամեն տեսակի մեղադրանքներ՝ հաճախ շատ վիճելի: 1342-ին այդ մեղադրանքները քննարկման դրվեցին Սիսում գումարված եկեղեցական ժողովում, որը ժխտեց դրանց մեծ մասը և Դանիել Դավրիժեցուն՝ Սիսի Ֆրանցիսկյան վանքում դասավանդողին, որը կրթված էր լատինական սխոլաստիկայի մեթոդներով, վստահեց «Հայերին վերադրված սխալների սլատասխանը» շարադրելու դործը. վերջինիս որակը շատ բարձր է Ներսեսի ուսումնասիրության որակից: Պապը դրա հանդեպ անտարբեր չմնաց՝ Դանիելը բարձրացվեց արքեպիսկոպոսի աստիճանի: Բանավեճերը երկար տևեցին. թագավորի եղբայրը՝ Բոհեմունդ դը Լուսինյանը, իր կողմից, հոգացել էր Հայկական Միսարանի մի թարգմանություն՝ ապացուցելու համար դրա լիակատար ուղղափառությունը: Այդուհանդերձ, պապական իշխանության վարչությունը ցանկանում էր լուսաբանել որոշ կետեր և Հայաստան ուղարկեց մի հարցարան (1351 թ.): Պարզ չէ, թե արդյո՞ք այդ հարցարանը հասել է Հայաստան և կամ արդյո՞ք այնտեղ քննարկվել է: Հայտնի է միայն, որ Ներսեսը, որը պիտի գար Սիս, մահացել է Կիպրոսում 1367 թվականից առաջ:

Այդ ընթացքում Մեծ Հայքում շարունակվում էր Հովհաննես Քոնեցու շուրջը ծայր առած գործընթացը: 1336-ին Հովհաննեսը որոշեց իր ենթակայության տակ գտնվող վանքերը հանձնել Քարոզիչ Եղբայրների (*Frères Prêcheurs*) ենթակայությանը: 1354-ին նրանք, ի վերջո, կազմեցին մի միաբանություն, որը 1356 թ. հաստատվեց պապի, ինչպես նաև կաթողիկոս Հակոբ II-ի կողմից, և ընդունեց «Ունիթոն Եղբայրների միաբանություն» անունը: Նրանցից մեկը՝ Թովմաս Զահկեցին, մեկնեց Ավինյոն՝ տանելով վերջինիս կանոնադրությունը, որն ընդօրինակված էր Դոմինիկյան օրդենի կանոնադրությունից, սակայն, այնուամենայնիվ, որոշ հարմարեցումներով՝ հաշվի առնելով իրավիճակը Հայկական վանքերում: Ունիթոններն, այգպիսով, կապվում էին Քարոզիչ Եղբայրների (դոմինիկյանների) հետ: Թովմաս Զահկեցին իր մահկանացուն կնքեց Հայրենիք վերադառնալիս՝ նավաբեկության ժամանակ: Օրդենի հաջողությունները, սակայն, դրանից հետո չնվազեցին: Ունիթոններն իրենց վրա վերցրին բազմաթիվ վանքերի վերահսկողությունը՝ ինչպես Մեծ Հայքում, այնպես

էլ Սև ծովի շրջակայքում: Նրանց գլխավոր վանքը գարձավ Ապարանների վանքը, ուր գործել է պատմագիր Մխիթար Ապարաներցին: Ծործորի վանքն էլ, որը գտնվում էր Մակուի և Ա. Թադեոսի վանքի միջև, ընդգրկվեց միաբանություն մեջ: Իտալիայի Բարսելոնաները ևս միացան նրան, առանց, սակայն, նրա մեջ տարրալուծվելու:

Նրանց հաջողությունը, սակայն, առաջ ըբերեց այն անձանց բուռն հակազդեցությունը, ովքեր նրանց մեղադրում էին հայկական ավանգուլթի լքելու և ծիսակարգի մեջ լատինական սովորույթներ ներմուծելու մեջ: Այդ հակազդեցության կենտրոնը Տաթևի համալսարանն էր, որի ամենաեռանդուն գործիչը վարդապետ Մաղաքիա Ղրիմեցին էր. նա, 1381-ից սկսած, մի շրջայց ձեռնարկեց նշված տարածքում ասպարեզից հեռացնելու, կարիք եղած դեպքում ուժով, Ունիթոունների կողմնակիցներին: Վերջիններս, այնուամենայնիվ, դիմացան Ապարանների և Նախիջևանի եպիսկոպոսության շուրջըրորը, ինչպես նաև Ս. Թադեոսում, Կաֆայում և Բերայում: Ասկայն այդ ժամանակվանից ի վեր նրանց կապերը պապության հետ դարձան ուղղակի:

Հարկ է նշել, որ այդուհետ կապերը հայերի հետ այլևս Կիլիկիայով չեն իրականացվել: Թեև մամլուքյան տիրապետության օրոք կաթողիկոսի նստավայրը դեռևս շարունակում էր Սիսր մնալ, 1375 թ. թագավորական իշխանությունը վերացավ: Այսպես, ավերվելով, դադարեց այն դաբաբար լինելուց, որը բացվում էր դեպի արևելյան Անատոլիա, Մեծ Հայք և երբեմնի մոնղոլական Պարսկաստան: Կոռիկոսն Այասին չփոխարինեց որպես ծովային ամրոց: Կապերը հայերի և պապության միջև սկսեցին իրականացվել Սև ծովի վրայով՝ Բերայով, Կաֆայով:

Ավինյոնյան ժամանակաշրջանի համար հատկանշական է եղել ինչպես աշխույժ կապերի պահպանումը Սիսի թագավորության հետ, ուր թագավորը և կաթողիկոսը սերտորեն կապված էին միմյանց հետ, այնպես էլ այլ բնույթի կապերը, որոնք հաստատվել են Մեծ Հայքի վանքերի հետ: Թագավորության վախճանի հետ, որը համարյա համընկնում է Ավինյոնի պապության վախճանին, սկսվում է մի նոր ժամանակաշրջան:

Ֆրանսերենից թարգմանեց
ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ

* «Պատմա-բանասիրական հանդեսի» նախորդ համարում լույս տեսած՝ Անրի Միչելի «Հայագրի ժան Ալթենը՝ Ֆրանսիայում ըամբակի և տորոնի մշակության առաջնեկ» հոդվածը ֆրանսերենից նույնպես թարգմանել էր բանասիրական գիտությունների թեկնածու Հասմիկ Մկրտչյանը: